

ցոյց է տալիս վերջին ժամանակներս մակեդոնացիների և հայերի մէջ տեղի ունեցած մերձեցումը և համերաշխ ջանքերով ընդհանուր թշնամու դէմ կուելու փորձերը:

Մակեդոնիայի համար «չուտով կը բացուի ցանկալի առաւօտը, բացականչում է իր զբքոյկի վերջում» այդ առաւօտը, հեռու չէ»:

Իսկ մենք կարծում ենք, որ անհիմն է այդ լաւատես հայեացքը, քանի որ այժմեան քաղաքական աշխարհը բոլորովին այլ երգ է երգում, քանի դեռ շատ մութ-մութ գիշերներ պիտի անցնեն, դեռ շատ արիւն պիտի հոսէ մինչև այդ առաւօտը Հեռու է նա և անյայտութեան քողով ծածկուած:

Ե. Թ.

Մ. Պէշիկպաշեան, ՏԱՂԵՐ, հեղինակի պատկերով և Ղէօի առջաբանով, Թիֆլիս, 1903 թ. գինը 40 կոպ.

Հայ նշանաւոր բանաստեղծ Մ. Պէշիկպաշեանի «Տաղերը» 33 տարուց յետոյ արժանանում են երկրորդ տպագրութեան: Այդ նոր հրատարակութիւնը ցանկալի էր տեանել աւելի խնամքով կատարուած, քան ներկայացնում է մեզ. ընթերցողին չի տրուում ոչ մի կենսագրական տեղեկութիւն բանաստեղծի մասին, անյայտ են մնում նոյն իսկ նրա ծննդեան և մահուան թւականները: Վատ չէր լինի, եթէ զբքոյկին կցած լինէր Պէշիկպաշեանի մասին եղած գրականութեան համառօտ ցուցակը: Վրիպակների թիւը բաւական պատկառելի չափ է ստացել: Պէշիկպաշեանի «Տաղերի» մէջ մի 4—5 իսկական բանաստեղծական գոհարներ կան, մնացածը ըստ արժանւոյն մոռացուած են և միմիայն նշանակութիւն կ'ունենային հեղինակի երկերի լիակատար հրատարակութեան մէջ: Սակայն այդպիսի մի հրատարակութիւն լուրջ կերպով իրագործելու համար պահանջում է աւելի մեծ խնամք և պատրաստութիւն, քան այդ երեւում է ներկայ զբքոյկը հրատարակողների մէջ:

Ու.

ՄԵԴՈՒՆԱՌՈՒԾՈՒԹԻՒՆ. կազմեց Գ. Ղազարեան, նկարներով. Վաղարշապատ, 1903.

Գիւղաստեղծութեան ինչպէս միւս ճիւղերը, այնպէս էլ մեղուապահութիւնը դարերից ի վեր ոչ մի քայլ առաջ չէ գնաւ: Մայիս, 1903.

ցել մեր հայրենիքում, այն տեղերում, ուր գիւղացիք պահում են մեղուններ, այսօր էլ մեղուններին իբրև բնակարան ծառայում են ծառերի ճիւղերից հիւսած նոյն կլթոցները (Կովկասում) կամ կռից թրձած նոյն փեթակները (թիւրքական Հայաստանում), ինչպէս գուցէ այն նախնական ժամանակներում, երբ մարդիկ փորձեր էին անում վայրի մեղուններին տուն բերելու:

Ամենափորձուած մեղուապահ-գիւղացին անգամ տարրական տեղեկութիւններ չ'ունի մեղուի և նրա կեանքի մասին: Մեզ պատահել է տեսնել գիւղական մեղուապահներին, որոնք չեն իմացել զանազանել մայր-մեղուին աշխատանքից կամ բոռից:

Հասկանալի է, որ մեղուապահութիւնից ստացուող արգիւնքի չափն ու յատկութիւնն էլ համապատասխան պէտք է լինեն գիւղացի մեղուապահի գիտութեան չափին և մեղունների նախնական բնակարանների յատկութեան:

Եւ յիշաւի այդպէս էլ են, չը նայէլով այն հրաշալի, հազւագիւտ բնական պայմաններին մեղուապահութեան համար, որոնցով առատօրէն օփտուած է մեր երկիրը: Մեղուը, այդ վերին աստիճանի աննդարար և համեղ կերակուրը մեղանում և թանգ է, և ըստ մեծի մասին վատ տեսակի:

Խիստ գովելի է մեր այն ինտելլիգենտ գիւղատնտեսների ջանքը, որոնք աշխատում են գրքեր և բրոշուրներ հրատարակելով նպաստել գիւղատնտեսութեան այս կամ այն ճիւղի զարգացման գործին:

Մեղուապահութեան մի այնպիսի ձեռնարկի կարիք, որի մէջ ամփոփուած լինէին ժամանակակից ամերիկական և եւրոպական մեղուապահական գիտութեան գործի տարրական կանոնները, վաղուց զգացւում էր մեզանում: Պ. Գ. Ղազարեանի «Մեղուաբուծութիւնը» մի այդպիսի փորձ է բաւարարութիւն տալու գոյութիւն ունեցող պահանջին:

Դժբախտաբար, պէտք է ասենք, որ Գ. Ղազարեանի փորձը այնքան էլ աջող չէ դուրս եկել.—նա ունի խոշոր թերութիւններ, որոնցից մի քանիսի վրայ մատնացոյց կ'անենք մենք: Նախ՝ ձրպիսի ընթերցող է աչքի առաջ ունեցել պ. Ղազարեանը իր «Մեղուաբուծութիւնը» կազմելիս, եթէ նա գրել է իր ձեռնարկը մեր այն չափազանց սակաւթիւ ինտելլիգենտ մեղուապահների համար, որոնք հնարաւորութիւն ունեն օգտուելու մեղուապահութեան օտար ընդարձակ գրականութիւնից, ապա պէտք է ասել, որ նա իզուր է աշխատել. իսկ եթէ նա գրել է աւելի մեծ քանակութեամբ ընթերցողների—գիւղացի մեղուապահների համար, այս դէպքում նա չէ յարմարացրել իր ձեռնարկը այդ չըջանի ընթերցանութեան,—նրա «Մեղուաբուծութիւնը» բաւա-

կանաչափ պարզ, բաւականաչափ կտրուկ-համառօտ չէ, իր մէջ պարունակում է շատ աւելորդաբանութիւններ, որոնք կարող են միայն չփոթեցնել անփորձ ընթերցողներին և որ գլխաւորն է՝ գերծ չէ բազմաթիւ սխալներից, նոյն իսկ կուրիոզներից։ Առաջ բերենք այդպիսիներից մի երկուսը. «Զմեռն անհրաժեշտ է թողնել փեթակում մի քանի ձու» (երես 18)։ Զմեռը փեթակում ոչ մի ձու չէ կարող լինել. մայրը ձմեռը դադարում է բանելուց, և մեղուները — այդ ամեն բանում փոքրիկ բացիոնալիստները — երբէք չեն հետեի պ. Ղազարեանի խորհրդին, որովհետեւ դա անմիտ բան է։ «Անպատեմբերին գնած մեղուներն (,) եթէ դադարել են հիւթ հաւաքելուց, կարելի է տեղափոխել երկու վերստից ոչ աւելի հեռու տեղ» (երես 18)։ Ինչո՞ւ ոչ հարիւր երկու կամ հազար երկու վերստ հեռու։ Մեղուների ազատ տեղափոխութիւնը կախուած է տեղափոխելի փեթակը յարմարաւոր կերպով նախապատրաստելուց, աւելի ոչինչ, որ ամսին էլ որ տեղի ունենայ տեղափոխուելը։ «Թոյլ, անմայր ընտանիքները պէտք է միացնել մի աւելի ուժեղի հետ» (երես 17)։ «Թոյլ ընտանիքը... աւելի լաւ է միացնել մի ուրիշ թոյլ ընտանիքի հետ» (երես 18)։ Առհասարակ պէտք է ասել, որ գրքի առաջին մասը — «Մեղուապահի ամսացոյցը» մի բոլորովին աւելորդ աշխատանք է, լի անթիւ սխալներով, որոնցից յիշեցինք մենք միայն մի քանիսը։

Գրքի միւս մասերը մեծ մասամբ բառացի թարգմանութիւններ են Պոտեխնի և Դատուի ձեռնարկներից, տեղ-տեղ համեմատ կազմողի աւելորդ «ОТСӨВЯТИНА»-ներով։

Մեր կարծիքով չ'արժէր այդպիսի ձեռնարկ կազմել. աւելի լաւ կը լինէր, եթէ պ. Ղազարեանը վերցնէր իր աղբիւրներից մէկն ու մէկը, թէկուզ հէնց նոյն Պոտեխնի ձեռնարկը և գլխէ գլուխ թարգմանէր, առանց իր կողմից յաւելուածներ անելու։

Զեռնարկի լեզուն բաւականաչափ կանոնաւոր է, թէպէտ և տեղ-տեղ պատահում են անկանոն և անհասկանալի նախադասութիւններ։ Փեթակի մուտքը մի տեղ կոչուում է մուտք, միւս տեղ անցք և այլն։

ՄԵՂՈՒԱՊԱՀ.